

Հայաստանի 2009 թ.

Մարդկային զարգացման ազգային զեկույցի (ՄՁԱԶ)

համառոտ նկարագիր

- ՄՁԱԶ-ի հիմնական նպատակը
- Հարցեր, որոնք կքննարկվեն ՄՁԱԶ-ում

ՄՁԱԶ-ի հիմնական նպատակը

Մարդկային պատմության ողջ ընթացքում մարդիկ մշտապես գաղթել են: Դարեր շարունակ, միգրացիան մարդկանց համար հանդիսացել է գոյատևման հիմնարար ռազմավարություններից մեկը, եւ, նշաններից դատելով, այս երեւոյթը մոտակա ապագայում չի փոխվելու: Այս առումով հայերը բացառություն չեն:

2009 թ. ՄՁԱԶ-ի նպատակն է նախաձեռնել համապետական բանավեճ Հայաստանում միգրացիայի թեմայով եւ խթանել հանրային քաղաքականության բարեփոխումներն այս ոլորտում՝ օժանդակելով լայն հանրության մասնակցությանը եւ փորձագետների ներգրավմանը հանրային քաղաքականությանը: ՄԱԿ-ի Զարգացման ծրագիրը (ՄԱԶԾ/UNDP) գտնում է, որ միգրացիան եղել է մնում է կարեւոր խնդիր Հայաստանի զարգացման տեսակետից, որը միգրացիայի մի քանի աղիքներ է վերապրել: Անկախությունից հետո վերջին 16 տարիներին Հայաստանից արտագաղթել է ավելի քան մեկ միլիոն մարդ, իսկ մասնավոր տրանսֆերտների ընդհանուր ծավալը գերազանցում է պետական բյուջեի ծախսերը: Եթե միգրացիան չստանա համարժեք գնահատական, ապա երկրի առջեւ ծառայած մարտահրավերների մի կարեւոր բաղադրիչը կմատնվի անուշադրության:

Համաշխարհայնացման (գլոբալացման) արդյունքում միգրացիայի հարցը դարձել է նույնիսկ ավելի վճռորոշ: ՄԱԶԾ-ն կարծում է, որ միգրացիան համաշխարհային սոցիալական երեւոյթ է եւ մարդկային զարգացման իսկապես առանցքային հարցերից մեկը: ՄԱԶԾ-ն ընդունում է, որ կարիք կա այս խնդիրը ենթարկել համապարփակ վերլուծությունների եւ մշակել ոլորտի քաղաքականությանն առնչվող գործողություններ, որոնք հարկ է ձեռնարկել: 2008 թ. Մարդկային զարգացման համաշխարհային զեկույցը նույնպես նվիրված է լինելու միգրացիայի խնդրին:

Միգրացիայի թեմայով զեկույցը կարող է դրական ազդեցություն ունենալ գոյություն ունեցող քաղաքականություններին մարտահրավեր նետելու եւ այս ոլորտում քաղաքականությունների այլընտրանքներ բացահայտելու տեսակետից:

Ակնկալվում է, որ միգրացիայի թեմայով ՄՁԱԶ-ը կդառնա քարոզչության կարեւոր գործիք եւ գիտելիքի արժեքավոր աղբյուր, որպեսզի վեր հանվեն եւ լուծումներ ստանան զարգացման բնագավառի տարբեր խնդիրներ, որոնք առնչվում են միգրացիային, բարձրանա հանրային իրազեկության մակարդակը եւ խթանվի քաղաքականությունների վերանայման եւ ճշգրտման գործընթացը:

Հարցեր, որոնք կքննարկվեն ՄՁԱԶ-ում

- Միգրացիոն միտումները, գլոբալացումը եւ մարդկային զարգացումը

Այս բաժնում կքննարկվեն վերջին երկու տասնամյակների ընթացքում արձանագրված միգրացիոն գործընթացները, վերջին միտումները ազգային եւ տարածաշրջանային մակարդակներում: Զեկույցը պետք է ներկայացնի այս խնդրի՝ մարդկային զարգացմանն առնչվող կողմերի խորը վերլուծություն: Մարդկային զարգացման տեսակետից որոնք են այն ձախողումները (սոցիալական, տնտեսական կամ քաղաքական), որոնցով պայմանավորված է միգրացիան: Եվ որն է միգրացիայի ունեցած ազդեցությունը Հայաստանում մարդկային զարգացման վրա: Ինչպիսի՞ն են հետեւանքները մարդկանց ունեցած ընտրության հնարավորությունների տեսակետից: Արդյո՞ք գոյություն ունեն որոշակի բարդություններ, որոնք ծագում են տարբեր մարդկանց ունեցած ընտրության

հնարավորությունների միջև, խմբային եւ անհատական շահերի ու երկրնտրանքների միջև, քաղաքացիների եւ պետության ունեցած երկրնտրանքների միջև, կարճաժամկետ եւ երկարաժամկետ հատվածների միջև փոխզիջումների արդյունքում: Հարկ է ուսումնասիրել միգրացիայի եւ մարդկային զարգացման վրա ազդող այլ գործոնների կապը, ներառյալ՝ հակամարտությունները, բնական աղետները եւ շրջակա միջավայրի խնդիրները:

Միգրացիայի թեմայով կատարված վերլուծական աշխատանքի մի զգալի մասը վերաբերում է դրա տնտեսական հետեւանքներին: Մարդկային զարգացման վրա միգրացիայի ունեցած ազդեցության հստակ ձեւակերպումը, որը կանդրադառնա մարդու իրավունքների, մարդկանց անվտանգության, կառավարման, սեռային հավասարության, մշակույթի եւ բազմազանության, զբաղվածության եւ կենսաապահովման հարցերին, նոր տարրեր կավելացնի միգրացիայի տնտեսական եւ քաղաքական դրսեւորումների ընկալմանը: Տնտեսական, սոցիալական, քաղաքական եւ մշակութային պայմաններից բխում են միգրացիայի տարբեր տեսակներ, որոնք բոլորն էլ հսկայական ազդեցություն ունեն մարդկային զարգացման վրա:

Միգրացիան, որպէս գոյատեւման ռազմավարություն, դարերի պատմություն ունի: Սակայն վերջին տասնամյակների ընթացքում գրանցվել է դյուրաշարժության աճ, ինչը միգրացիան վերածել է համաշխարհային սոցիալական երեւոյթի՝ ընդհանուր գլոբալացման եւ շարունակվող համաշխարհային անհավասարությունների համատեքստում: Այս բաժնում կքննարկվեն նաեւ գլոբալացման արդյունքում միգրացիայի ներկա միտումներն աշխարհում:

Միգրացիան պահանջում է մարդկանց հոսքերի գնահատման մանրակրկիտ ջանքեր:

- **Աղքատությունը, անհավասարությունները եւ միգրացիան**

Այս բաժնում միգրացիան կդիտարկվի աղքատության եւ անհավասարության համատեքստում կամ որպէս դրանց հետեւանք: Չնայած աղքատության, անհավասարության եւ միգրացիայի միջև կապն արժանացել է լայն ճանաչման, միգրացիան դեռեւս հետեւողականորեն չի ներառվել զարգացման ազգային ռազմավարություններում եւ օրակարգերում կամ միջազգային օժանդակության ծրագրերում:

Կարիք կա վերլուծելու բոլոր միգրացիոն միտումները. ներքին, արտաքին, Հայաստանից՝ դեպի ո՞ր երկրներ: Մասնավորապէս, դիտարկելով միգրացիայի ընդլայնված հոսքեր ունեցող մարզերը եւ երկրները, այն կարող է բացահայտել կարեւոր տեղեկություններ ապագա սոցիալ-տնտեսական եւ քաղաքական միտումների մասին, որոնք առաջանում են երկրի ներսում եւ երկրի սահմաններից դուրս նոր ձեւավորվող շուկաներում եւ ժողովրդավարական հասարակություններում:

Միգրացիան կարելի է քննարկել նաեւ տարածաշրջանային անհավասարությունների տեսանկյունից, որը հրատապ թեմա է եւ հնարավորություն կտա, որպէսզի մարդկային զարգացման զեկույցը նշանակալի ներդրում ունենա այս թեմայով ընթացող բանավեճերում:

Կարիք կա միգրացիային առնչվող քաղաքականությունները կարճաժամկետ տնտեսական կամ քաղաքական նեղ մտահոգությունների փոխարեն վերլուծել երկարաժամկետ նկատառումներից ելնելով, ինչպէս նաեւ վիճարկել գոյություն ունեցող քաղաքականությունները եւ ձեւակերպել քաղաքականության առումով նոր այլընտրանքներ:

- **Միգրացիան եւ մարդու իրավունքները**

Այս բաժինը կանդրադառնա միգրացիայի եւ մարդու իրավունքների միջև փոխկապվածությանը: Միգրացիան, նույն կերպ, ինչ գլոբալացումը, կարող է լինել առաջընթացի եւ մարդկային զարգացման աղբյուր, սակայն այն պետք է ճիշտ եղանակով կառավարվի: Միգրանտների իրավունքները պետք է պաշտպանված լինեն:

Միգրացիայի գենդերային (սեռային) կողմը չափազանց կարեւոր բազմակողմանի խնդիր է, որը պետք է դիտարկվի: Ինստիտուցիոնալ աջակցության պակասի պատճառով, մարդկանց առեւտրով

(թրաֆիքինգ) զբաղվողները հաճախ լցնում են այն վակուումը, որն առաջանում է իրավական և սոցիալական համակարգերի կողմից կանանց օգնություն չտրամադրելու արդյունքում:

Հատուկ ուշադրություն կդարձվի անօրինական միգրացիային և մարդկանց առևտրին (թրաֆիքինգ): Մարդկային զարգացման վրա միգրացիայի ունեցած ազդեցությունը հստակ չէ առնվազն միգրանտների մի խմբի դեպքում. անօրինական միգրանտները երբեմն բախվում են մի իրավիճակի, երբ սեփական երկրները լքելուց հետո նրանց գոյատևման հավանականությունը կտրուկ անկում է ապրում: Նրանց անօրինական կարգավիճակը, ըստ սահմանման, ենթադրում է իրենց նոր հայրենիքում սեփական կարծիքն արտահայտելու հնարավորության և քաղաքական ներկայացվածության բացակայություն: Փախստականների ճամբարներում պակասում են ամենատարրական ծառայությունները: Քաղաքային ետնախորշերում գտնվող սենյակները վտանգում են մարդկանց առողջությունը:

- **Մասնավոր տրանսֆերտները և Սփյուռքի դերը զարգացման գործում**

Այս բաժնում կքննարկվի մասնավոր տրանսֆերտների ազդեցությունը աղքատության կրճատման և զարգացման վրա: Կարելի է հասկանալ այս ազդեցության հարակալությունը (ներառյալ՝ այս միջոցների օգտագործումը սպառման նպատակով՝ հակառակ արտադրության մեջ ներդրումներ կատարելու), ինչպես նաև ,Սփյուռքի՞ն է և զարգացման գործում նրանց դերին առնչվող այլ խնդիրներ: Նրանց ետ՝ դեպի երկիր գրավելու ռազմավարությունները նույնպես պետք է քննարկվեն միգրացիայի համատեքստում:

Մասնավոր տրանսֆերտները պետք է օգտագործվեն մարդկային զարգացման մեջ ներդրումներ կատարելու նպատակով, և պետք է ստեղծվեն մեխանիզմներ՝ կանգնեցնելու շարունակվող ,ուղեղների արտահոսքը: ՄՉԱԶ-ը կփորձի պարզել քաղաքականությունների և ինստիտուցիոնալ այն փոփոխությունները, որոնք պետք է կատարվեն միգրացիոն հոսքերին զուգահեռ, որպեսզի հնարավոր լինի շաղկապել դրանց տնտեսական և սոցիալական օգուտները, ինչպես նաև ապահովել այդ օգուտների արդարացի բաշխում:

Տրանսֆերտները կարող են նաև օգտագործվել կրթության և առողջապահության զարգացման նպատակով և կարող են իրապես նպաստել աղքատության կրճատմանը: Ի հավելումն, դրանք կարող են նաև երիտասարդների համար հանդիսանալ մի հզոր շարժառիթ՝ հետեւելու միգրանտների օրինակին և լքելու իրենց հայրենի համայնքները: Զեկույցը կվերլուծի այս հետեւանքները:

Հատուկ դիտարկման պետք է արժանանան ,ուղեղների արտահոսք (brain drain, որակյալ աշխատողների արտագաղթ) երեւոյթը և սրան հակառակ՝ ,ուղեղները ջուրը լցնելը (brain-in-the-drain, իրենց հայրենի երկրում զբաղվածության հնարավորությունների պակասի պատճառով որակյալ աշխատողների անբավարար օգտագործում) երեւոյթը, ինչպես նաև դրանց օգուտների ու վնասների հարաբերակցությունը, որը հաճախ ենթադրում է խմբային և անհատական շահերի խզում:

- **Մարդկային զարգացման վերջին միտումները Հայաստանում**

Այս բաժինը կանդրադառնա մարդկային զարգացման վերջին միտումներին համապետական և ենթապետական (մարզային) մակարդակներում: Հատուկ ուշադրություն կդարձվի Հազարամյակի զարգացման նպատակներին (Millennium Development Goals, MDGs), անհավասարության և խոցելիության խնդիրներին: Բաժինը կներկայացնի մարզային և համայնքային տվյալների վերլուծություն, ներառյալ՝ Հայաստանի մարզերի համար մարդկային զարգացման համաթվեր հաշվելու մի վարժություն: